# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/26-1

ք.Երևան «25» «12» 2019թ.

ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, գործելով Հայաստանի Հանրապետության անունից, ի դեմս ծառայության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝ Արտակ Ղազարյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և, «Դերձակ» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն՝ Լ. Գրիգորյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող» մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ, հիմք ընդունելով 30.10.2019թ.-ին կնքված N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/26-1 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 8.5 կետը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով «Դերձակ» ՍՊԸ-ի 16.12.2019թ.-ի գրավոր առաջարկությունը, Կողմերը որոշեցին՝ Պայմանագրով նախատեսել 13584456 (տասերեք միլիոն հինգ հարյուր ութսունչորս հազար չորս հարյուր հիսունվեց) ՀՀ դրամ կանխավճար և կանխվճարի գումարի չափով ապրանքների մատակարարումը երկարաձգել 30 օրացույցային օրով, սահմանել մինչև 25.01.2020թ.-ը:

1.2 «Վաճառող»-ը պարտավորվում է մինչև 2019թ.-ի դեկտեմբերի 27-ը «Գնորդ»-ին ներկայացնել կանխավճարի չափով բանկային երաշխիք:

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/26-1 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրով չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները ու պարտականությունները թողնվում են անփափոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից՝ հայերեն լեզվով, կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայություն | «Դերձակ» ՍՊԸ |
| ք. Երևան, Արշակունյաց-63 | ՀՀ, ք. Երևան, Ավան, Քուչակ 16/2 |
| ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011175016 | Հ/Հ 11500377491200 |
| ՀՎՀՀ 02204739 | ՀՎՀՀ 00885285 |
| ՔԿ ծառայություն՝ | Տնօրեն՝ |
| Ա.Ղազարյան | Լ.Գրիգորյան |
| (ստորագրություն) | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |